ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2024թ. № 628

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33.1-ին կետի «բ» ենթակետով, 35-րդ կետի «բ» ենթակետով և 35.1-ին կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18062024-06-0065 վկայականը, Մխիթար Մաթևոսի Մակարյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, Սպիտակ ք., Ս. Ավետիսյան փողոց, 134/1 ծածկարան» հասցեում գտնվող, 06-006-0133-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 106,74 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ 130 329,54 ՀՀ դրամ (1 քմ 1221 ՀՀ դրամ), 368,46 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ 1 349 668,98 ՀՀ դրամ (1 քմ 3663 ՀՀ դրամ), իսկ դրա վրա գտնվող 16,3 քառակուսի մետր մակերեսով ծածկը՝ 177 360,3 դրամ (1 քմ 10881 ՀՀ դրամ) արժեքներով, 6,7 քառակուսի մետր մակերեսով ծածկը՝ 72 902,7 դրամ (1 քմ 10881 ՀՀ դրամ), 26,37 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը՝ 286 931,97 դրամ (1 քմ 10881 ՀՀ դրամ), 1,5 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ 16 321,5 դրամ (1 քմ 10881 ՀՀ դրամ), 1,6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ 17 409,6 դրամ (1 քմ 10881 ՀՀ

դրամ) և 0,9 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ 9 792,9 դրամ (1 քմ 10881 ՀՀ դրամ), որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Մխիթար Մաթևոսի Մակարյանին (ծնված՝ 08.10.1975 թ.):

2. Մխիթար Մաթևոսի Մակարյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Մխիթար Մաթևոսի Մակարյանից հետ գանձել միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանին և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հունիսի 19
ք.Սպիտակ